Նարեկ Սարգսյան

Զայրույթ

Դու ժանտախտի պես կեղեքում ես

սիրտս ու հոգիս,

Դու, ինչպես ամենավերջին մոլագար,

Ստիպում ես, որ արյունս խելագարի պես

եռա երակներումս:

Դու ինձ նետում ես տխրության և հիասթափությունների մի

հսկա անդունդ:

Դու խելագարի պես նայում ես աչքերիս

Ու ստիպում տանջվել չարածներիս համար:

Գիտեմ՝ դու իմ թշնամին ես,

Քեզ պետք է սանձեմ:

Բայց միևնույնն է, դու արդար ես,

Որովհետև ստիպում ես ինձ պայքարել

Կյանքի անարդարությունների դեմ,

Համոզում ես, որ սխալ եմ ապրում:

Բայց ամենածանր այն է, որ անընդհատ

Հիշեցնում ես իմ թերությունները:

Խղճա՛ ինձ և մի՛ եղիր այդքան դաժան:

13.09.2009թ. Մեղրի